ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու

ԱՍՏԾՈ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՋԻՎԱՆՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Աշուղական երգարվեստում մինչեւ ԺԹ. դ. բարոյախրատական, պատմական, ընկերային, կրոնական, երգիծական, կենցաղային թեմաները եղել են պարտադիր[1]: Հասարակական, քաղաքական ու տնտեսական նոր հարաբերությունները բերում են նոր խնդիրներ, հների՝ ավանդականի նկատմամբ նոր մոտեցումներ ու արժեւորումներ: Ջիվանին ամբողջացնում ու քաղաքացիություն է տալիս իր անմիջական նախորդների արծարծած թեմաներին ու մոտիվներին, այդ թվում՝ աստվածայինի, հավատի, Հայ Եկեղեցու թեման Ջիվանու մի շարք երգերում բացահայտվում են միստիկական (չենք խուսափում այս բնորոշումից), փիլիսոփայական ու բարոյական առումներով՝ պահպանելով ազգային-հոգեբանական հիմքը:

«Աշուղ Ջիվանին յուր ոչ մի երգը դատարկ տեղը չէ հորինել, այլ մի պատճառ է ունեցել. մի պահանջ, մի բողոք կյանքի փոփոխվող պայմաններից», - գրում է Ջիվանու որդին[2]: Այս հիմնադրույթից կարելի է եզրակացնել, որ Աստծուն ու աստվածայինին, դավանանքին ու Եկեղեցուն նվիրված նրա երգերը եւս ունեցել են իրենց պատճառները: Այդ երգերի ստեղծման խթանը նրա՝ ճշմարիտ քրիստոնյայի էությունն է, նրա պատկերացումները, հույսերի ու սպասումների գաղափարատիպը: Ջիվանին ընդունում է Աստծո գոյությունը՝ որպես գերագույն, կատարյալ, ամոքիչ ու մխիթարիչ ամենակարող էակի: Միայն Աստված է ի զորու բարեփոխելու մարդու կյանքը, երջանկություն ու հաջողություն պարգեւելու նրան, ազատելու մեղքերից, շնորհելու նրան հոգու խաղաղություն, սեր, հաշտեցնելու իր խղճի հետ:

Աստծո էության նման իմաստավորումը բնորոշ է Ջիվանու մի շարք երգերին: Սակայն աշուղն ունի նաեւ ստեղծագործություններ, որոնցում փորձում է բացահայտել Աստծո էությունը առավել առարկայական, շոշափելի, հասարակ մահկանացուին ընկալելի հատկանիշներով.

Իմաստության աղբյուր բարությունով լի,
Մարդ կատարյալ, անբիծ, մաքուր, գովելի,
Միակերպ անփոփոխ, անեղծանելի[3]...

Այս երգում աշուղն Աստծուն մեծարում է Նարեկացու բառապաշարին բնորոշ բառերով («արփիափայլ անհատ, լուսածին», «լուսո որդի», «իմաստնության աղբյուր», «անեղծանելի», «անաչառ դատավոր», «փառաց թագավորը աշխարհին» եւ այլն[4]):

1 Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հ. III, Երեւան, 1962, էջ 253:
2 **Գ. Լեւոնյան**, Երկեր, Երեւան, 1963, էջ 38:
3 Անդ, էջ 390:
4 Անդ:

Ջիվանին ոչ միայն Աստծո, այլեւ նրան ծնող, սնուցող, աշխարհին «լուսապու արեւ» պարգեւող մոր՝ Աստվածածնի գովքն է անում: 1907 թ. հորինած այս երգը, «Չնաշխարհիկ կույս»[5] վերնագրով, կրկին ու կրկին փառաբանում է Արարչին, մեծարանքի խոսքեր չի գտնում կարծես թե արտահայտելու իր սերը, պաշտամունքը Աստվածածնի հանդեպ: Բանաստեղծության մեջ ներկայացվում է Տիրոջ ծննդյան ավետիսն ընդունող խոնարհ կույսից մինչեւ Տիրամայրը ձգվող ուղին բանաստեղծական տողերի աստիճանական զարգացմամբ: Առաջին տանը Տիրամայրն անվանվում է մարդկության հուսապու արեգակը պարգեւած կույս աղջիկ.

Իսրայելի անգին զոհար կույս աղջիկ,
Հոգեկան լուսապու արեւ տվիր մեզ[6]...

Բանաստեղծության մեջ հոգեւոր ապրումին միախառնվել է ժամանակի ռուսական հեղափոխության շունչը, որի համար Քրիստոս նաեւ հեղափոխական է անվանվում.

Մեծ հեղափոխական Որդիդ միածին,
Սատանայի ձեռքից փրկեց մեր հոգին:

Ահա այսպիսի յուրօրինակ զուգորդմամբ իրար կողք են դրվել «Մեծ հեղափոխական» եւ «Միածին Որդի» կապակցությունները:

Ադամական մեղանչմամբ երկնքի փակված դռների՝ մարդկության առջեւ վերստին բացվելու աստվածաբանական ըմբռնումն արտահայտվում է հետեւյալ տողերով.

Քո Որդուդ շնորհիվ լուսավորվեցինք,
Դեպ երկինք թռչելու լայն թեւ տվիր մեզ:

Առաջին տունը սկսվում է «Կույս աղջիկ» բնորոշմամբ, իսկ վերջին տունն ավարտվում է «Անարատ տաճար» անվանելով, որը միջնադարյան խորհրդաբանությամբ նշանակում է, որ Տիրամայրն անարատ՝ անախախտ կուսությամբ մի տաճար է, որ իրենում կրեց եւ լույս աշխարհ բերեց մարդկության Փրկչին:

Չեմ կարող քեզ գովել Ջիվանս տկար,
Պետք է Ներսես Շնորհալին գերհանճար,
Ո՛վ թանկագին անոթ, անարատ Տաճար,
Մարդասեր Փրկիչը պարքեւ տվիր մեզ [7]:

Ջիվանու՝ որպես խոշոր ստեղծագործողի, աշխարհայացքողությանը յուրահատուկ է կատարելության հասնելու տենչանքը, որը նա ձգտում է իրագործել Աստծո օգնությամբ: Նա համապատասխան բառեր է որոնում Աստծո մեծությունը բնորոշելու համար ու չի գտնում: 1902 թ. հորինած «Ո՛վ աներեւույթ զորություն, զաղտնիք քննող մեծ էակ» սկզբնատողով երգում աշուղը խոստովանում է իր անզորությունը.

Ես մի տկար խեցի եմ՝ արյան կաթիլից գոյացած,
Ի՞նչ կարող եմ իմանալ քու մեծության չափը շիտակ[8]:

5 Տե՛ս անդ, էջ 311:

6 **Աշուղ Ջիվանի**, Անհայտ երկեր, Երեւան, 2009, էջ 311:

7 Անդ:

8 Անդ:

Այստեղ խոսքը միայն Ջիվանու քնարական հերոսի մասին չէ, այլ ընդհանրապես մարդ-մահկանացուի եւ Աստծո համեմատելի եզրերի. «Մարդը ի՞նչ է, չոր խոիվ, կրակի նյութ, հողի պաշար»[9], - ասում է երգիչը: Իսկ երգի վերջին տունը բացահայտում է մարդու ներքնաշխարհի երերումները, հոգեկան նեցուկ ու օգնական ունենալու անդիմադրելի պահանջը.

Չնչին եմ ես, ո՛վ Տեր իմ, կարոտ ուրիշի օգնության,
Ընկճվող, շուտ փշրվող, որպես մի կավեղեն աման,
Հասակով մեծացել եմ, խելքով տգետ, համբակ Ջիվան,
Մեղ**գ**երու մեծ իշխանին դարձել եմ հլու հպատակ:

Ինքնանսեմացման, ինքնախարազանման հնարանքը, որը տեղ է գտել այս ստեղծագործության մեջ, բնորոշ է հայ ամբողջ միջնադարյան գրական ժառանգությանը, քնարերգությանն ու նաեւ աշուղական երգարվեստին:

Աշուղը, թվում է, երկյուղ է ապրում առ Աստված ունեցած իր հավատի հաստատունության համար, ձաղկում է իրեն՝ չգործած ու գործած սխալների ու մեղքերի համար.

Խնդրում եմ, Տե՛ր, քո սիրուդ մեջ, խնդրում եմ հաստատե ինձ,
Այս թունալից, վշտաբեր դառ վերքերեն անջատե ինձ,
Ո՛վ գթառատ եւ ողորմած ամենակալ Տե՛ր բարի,
Սիրելի որդվույդ սիրո մասին ցավից փարատե ինձ[10]:

Այս տողերը դարձյալ մեզ տանում են դեպի ակունքները, դեպի Նարեկացին:

Մարդկային փոխհարաբերությունների խորն ու բազմակողմանի ճանաչումն ու իմաստավորումը, մարդ արարածի գոյության առեղծվածի քննությունը Ջիվանուն հանգեցրին մարդու եւ Աստծո գոյության արժեւորման ավելի խոհական, փիլիսոփայական եզրակացությունների: Թվում է, թե Ջիվանին փորձում է ոչ միայն աղերսանք ուղղել առ Աստված, այլեւ դատի, արդար դատաստանի վճիռ պահանջել նրանից.

Ոչ տեր լիներ եւ ոչ ծառա աշխարհում,
Այսպես երջանիկ օր պիտի գա՞ արդյոք.
Բոլոր մարդիկ կանգնած մեկ ճանապարհում,
Այն սուրբ հոգին հզոր պիտի գա՞ արդյոք[11]:

Հայ ժողովրդի, հասարակ մարդկանց շրջապատում հատկապես ընդունված է եղել «հայի Աստված» հորջորջումը: Ջիվանին եւս իր երգում օգտագործում է այն, օգնության կանչում մեր պապերի ու հայրերի Աստծուն: Միայն այն պարագայում նա օգնության կհասնի, եթե մշտապես հիշես նրան: Հայի Աստծուն դիմելու մի արտահայտությունն է «Ազգիս «Տէր Ողորմեան» բանաստեղծությունը, որը Ջիվանին գրել է 1895 թ. դեկտեմբերի 10-ին՝ սկսված համիդյան ջարդերի շրջանում: Եկող Նոր տարին, սովորաբար, լավատեսական մաղթանքների եւ տրամադրության է մղում: Ջիվանին, սակայն տարեվերջին գրված այս բանաստեղծության մեջ խորին հուսահատությամբ է նայում ապագային եւ ապավինում Աստծուն:

9 Անդ, էջ 487:
10 Անդ, էջ 331:
11 «Ջիվանու քնարը», Երեւան, 1959, էջ 247:

Անանձնական ցավով ու մտահոգությամբ է նա դիմում Աստծուն՝ իր աղերսն արտահայտելով Սիմեոն Ա. Երեւանցու (Կթղ. 1763-1780 թթ.) տողերի հետեւողությամբ: Սիմեոն Կաթողիկոսի կողմից «Աղօթք» վերնագրված գործը, որն հայտնի է «Արի՛, Աստուած հարցըն մերոց...» սկսվածքով, Ջիվանին իր գործի վերնագրում հիշում է «Տէր Ողորմեա» ձեւով, որ կրկնվում է Սիմեոն Կաթողիկոսի գործի յուրաքանչյուր տան վերջում:

Ջիվանու «Ազգիս «Տէր Ողորմեան» այս խոսքերի ազգային նորովի իմաստավորումն է՝ կապարված ի տես սկսված ազգային արհավիրքի:

Սիմեոն Կաթողիկոսը առանձնական, անհատական աղոթքից անցում է կատարում ազգային ընդհանրացմանը՝ Աստծուն դիմելով հայ ժողովրդի անունից.

Արի՛, Աստուած հարցըն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց,
Հա՛ս յօգնութիւն ծառայից Քոց,
Անօգնական ազգիս Հայոց.
Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛[12]:

Հին ու նոր գրականությունների սահմանագծին կանգնած Հայրապետը նեղյալների ապավեն Աստծուն դիմում է իր ազգակիցների փրկության համար, որ իբրեւ քրիստոնյա ժողովուրդ Աստծո ծառաներն են: Ասվածին համահունչ ձեւով, Հայոց Կաթողիկոսի հետեւողությամբ Ջիվանին գրում է.

Տկարներուն տեր ու պաշտպան,
Աստված հզոր լեր պահապան,
Վերջին օրն է հայ ազգության,
Տեր, ողորմյա՛, Տեր, ողորմյա՛[13]:

Երկրորդ տան մեջ Սիմեոն Երեւանցին Տիրամոր եւ Ս. Խաչի բարեխոսությանն է դիմում Տիրոջ փոքր հոտի՝ հայ ժողովրդի համար: «Փոքր հոտ» խոսքերը վերցված են Ղուկասու ավետարանի «Մի՛ երկնչիր, հօտ փոքր» տողից.

Միջնորդութեամբ Սրբոյ Խաչիդ,
Եւ անարատ սուրբ ծնողիդ,
Ցիշեա՛ զհեղումն արեան Փրկչիդ,
Եվ ի խնդիր փոքու հօտիդ.
Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛:

Նույն այս ընթացքով Ջիվանին խաչյալ Քրիստոսի բարեխոսությանն է ապավինում առ Հայրն Աստված.

Մեկ ցավերս եղավ հազար,
Դարձանք հողերուն հավասար,
Խաչյալ Որդուդ սիրո համար,
Տեր, ողորմյա՛, Տեր, ողորմյա՛:

12 **Ծ. Նազարյան**, Ողբի եւ սթափման բանաստեղծությունը, Երեւան, 1992, էջ 322:
13 **Աշուղ Ջիվանի**, Անհայտ երկեր, էջ 556:

Ինչպես Սիմեոն Կաթողիկոսի, նույնպես եւ Չիվանու գործը բաղկացած է չորս բանաստեղծական տներից: Վերջին տունը Սիմեոն Կաթողիկոսն ավարտում է այսպես.

Արդ, անկանիմք առաջի Քոյ,
Գոչեմք, մեղա՛յ Տեառնըդ մերոյ,
Դարձո՛յ ի մէնջ զցասումն Քոյ,
Վասն անսպառ գթութեան Քոյ.
Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛:

Աստվածային ցասումը դադարեցնելը Չիվանին արտահայտում է թուրքերի հետ կապված հետեւյալ ձեւակերպմամբ.

Թուրքին խելք տուր որ արթնա,
Յուր չարն ու բարին հասկնա,
Հայերուն կոտորել չը տա,
Տեր, ողորմյա՛, Տեր, ողորմյա՛:

Մարդու գոյության իմաստին ու խորհրդին, կյանքում ու հասարակության մեջ ունեցած դերին, քրիստոնեական չափանիշներով՝ մարդու եւ հասարակության փոխհարաբերություններին Չիվանին բազմիցս անդրադարձել է իր երգերում:

Քրիստոնեական բարոյական չափանիշներին նախանձախնդիր Չիվանին մարդու մեջ կարեւորում է ներքին, հոգեկան բովանդակությունը եւ ոչ թե արտաքին ձեւականը.

Ինչ մարդ որ չունենա հոգեկան ուսում,
Որչափ գիտուն լինի՝ դարձյալ խակ է նա,
Դսեւանց քիչ եփած, ներսի կողմն է հում
Անխելք դյուրահավան իմաստակ է նա[14],

- գրել է աշուղն իր ստեղծագործական կյանքի արշալույսին՝ 1876 թ.: Մարդու գնահատության էական չափանիշը նրա գործն է, բարի, իր շրջապատի, հասարակության համար պիտանի, օգտակար գործ անելն է: Կյանքում ամեն ինչ անցողիկ է՝ հարստություն, գեղեցկություն:

Չիվանին իր խոսքն ազդեցիկ դարձնելու համար հաճախ ոգեկոչում է աստվածաշնչային հեղինակություններին.

Սողոմոն իմաստունը գիտնալով է ասել -
«Հազարավոր գանձերից մեկ բարի անունն է լավ»[15]:

Այս առումով Չիվանին իր վերաբերմունքը դրսեւորում է երբեմն առարկայական, երբեմն խոհափիլիսոփայական ըմբռնումներով, փորձում իմաստավորել իր մոտեցումները տիեզերական չափանիշներով: Կյանքի հարահոս ընթացքում ամեն ինչ անէանում ու փոշիանում է: Ստորեւ բերված թե՛ առաջին տողին եւ թե՛ ընդհանրապես ողջ բանաստեղծությանը համահունչ են «Սաղմոսաց գրքի» հետեւյալ տողերը. «Մարդոյ՝ որպէս խոտոյ են աւուրք իւր. որպէս ծաղիկ վայրի՝ այնպէս ծաղկէ: Շնչի ի նմա հողմ՝ եւ ոչ է, եւ ոչ ետս երեւի տեղի նորա» (Սղմ. ճԲ. 15-16):

14 Անդ, էջ 305:
15 Անդ, էջ 309:

Ի՞նչ է մարդը աշխարհի մեջ՝ ծաղկի պես անցողական,
Եթե ունի մի բարի գործ, նա կը մնա հավիտյան[16]:

Եթե փորձենք ընդհանրություններ որոնել Ջիվանու եւ ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների միջեւ, ապա դրանք, անտարակույս, կգտնենք, բայց ոչ երբեք իբրեւ պարզ նմանողություններ: Այստեղ խոսք կարող է լինել միայն աշխարհազգացման, երեւույթների միատեսակ ընկալման ու գնահատության մասին, ինչպես ասենք՝ փառքի, հարստության, գեղեցկության, «աշխարհի բանի» անցողիկության վերաբերյալ.

Եկվորը նորից կերթա,
Մնացող ոչ ոք չկա,
Փառքը վաղանցուկ բան է
Ոչ մի մարդու չի մնա[17],

- գրել է աշուղը 1902 թ.: Այստեղ ակնհայտորեն զգացվում է «Ժողովողի գրքի» «Ունայնութիւն ունայնութեանց» խոսքի շունչը:

1907 թ. նա նորից է անդրադառնում այդ խորհրդածությանը.

Ոչ ոքի ոչինչ չի մնա,
Փառքը թառամող սաղարդ է,

եւ

Գեղեցկությունն էլ մի տեսակ
Հրապուրիչ, մաշվող զարդ է[18]:

Նույն կերպ հասկանում ու իմաստավորում է կյանքը մեծ բանաստեղծը.

Անց են կենում սեր ու խընդում,
Գեղեցկություն, զանձ ու զահ[19]:

Ջիվանու երգերում բարի գործ անել նշանակում է ուղղակի բարեգործություն անել: Նրա մի շարք ստեղծագործություններում բարեգործության մոտիվն ունի առարկայական դրսեւորումներ՝ օգնել տնանկին, մերձավորին, կարոտյալին: Եւ նա իր երգերում ներկայացնում է առատաձեռն ասպվածային անհատին՝ ի հակադրություն ժլատի, չարի ու ագահի[20]:

«Ժլատն ու առատը» ստեղծագործության մեջ աշուղը երկու անհատների կյանքի ու գործունեության, վարքագծի բացահայտմամբ արժեւորում է նրանց դերը: Աշուղը հավատում է՝ Ասպված յուրաքանչյուրին հատուցում է ըստ իր ծառայության ու արժանիքի.

Առատ մարդը հարյուր տարեկան եղավ,
Շատ օգտակար բարի գործեր կատարեց,
Բարի քրիստոնյա մարդու պես մեռավ,
Յուր շավղին հետեւող ժառանգներ թողեց[21]:

16 Անդ, էջ 476:
17 Անդ, էջ 324:
18 Անդ, էջ 126:
19 **Ն. Թումանյան**, Երկեր, հ. 1, Երեւան, 1969, էջ 185:
20 Տե՛ս **Աշուղ Ջիվանի**, Անհայտ երկեր, էջ 286, 508 եւ այլն:
21 Անդ, էջ 287:

Մինչդեռ ազահի մասին Ջիվանին ասում է.

Ազահը անհագակ ծով է, աշխարհն ուրե՝ չի կշտանա,
Ճշմարիտ հարուստը նա է, ով վիճակից բավական է [22]:

Եւ աշուղի մտորումները՝ մարդու կյանքի առեղծվածի մասին, նրան հանգեցնում են մի եզրակացության.

Բարի անունն է միայնակ,
Փոխփոխում է որպես փայլակ [23]:

Մի այլ երգում՝ գրված 1902 թ., նա նորից ու նորից բարի գործն է փառաբանում.

Բարի գործը չունի վա**ղջ**ան,
Ապրում է մինչեւ հավիտյան,
Ամեն ազնիվ հաստատության,
Հիմքն է բարեգործությունը[24]:

Ջիվանու «բարի անունը» համահունչ է Թումանյանի «գործին».

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՛կ նրան, ով իր գործով
Կապրի անվերջ, անդադար[25]:

Չարի, չարության հանդեպ երկու մեծ մտածողներն արտահայտում են միատեսակ վերաբերմունք: 1901 թ. գրած «Ժլատն ինչքան հարուստ լինի՝ **աղգ**ատի պես է» երգում[26] Ջիվանին, հավատարիմ իր դավանած չափանիշներին, ասում է.

Չարությունն էլ կպատմվի սերունդե-սերունդ,
Վատ անունն էլ չի եղծվիլ, արատի պես է[27]:

Աստվածաշնչային թեմաների վրա հիմնված բարոյախրատական ոճն այնքան հարազատ է Ջիվանուն, որ դրանով է նա արտահայտում անգամ իր ազգային-քաղաքական դիրքորոշումը: «Ես մի քաղցր ձայն լսեցի...» սկսվածքով գործում միանգամայն անսպասելի աշուղական լուծմամբ Տասը կույսերի առակի միջոցով Ջիվանին արձագանքել է Ռուսական առաջին հեղափոխության խռովահույզ օրերին ցարի 1905 թ. մարտի նշանավոր հրովարտակին: Վերջինս վերաբերում էր Հայոց Եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մինչ այդ ընդունված որոշումը չեղյալ հայտարարելուն:

Հայոց Եկեղեցու դեմ այս ոտնձգությունը համազգային մի ընդվզում առաջ բերեց, որին, ինչպես նաեւ սկսված 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխությանը Ջիվանին մինչ այդ եւս անդրադարձել էր, սակայն շատ ավելի զգուշությամբ: Այստեղ արդեն անկեղծ խանդավառությամբ գովելով ցարական հրովարտակը, միաժամանակ ըստ

22 Անդ, էջ 508:
23 Անդ, էջ 126:
24 Անդ, էջ 306:
25 **Հ. Թումանյան**, անդ, էջ 185:
26 **Աշուղ Ջիվանի**, Անհայտ երկեր, էջ 292:
27 Անդ: Հմմտ. **Հ. Թումանյան**, անդ, էջ 185:

էության քննադատում է նախորդող վիճակը, քանի որ եթե նոր հրովարտակը ուրախություն է պատճառում, ապա դրանից առաջ եղածը պետք է բողոք եւ ընդվզում պատճառած լիներ:

Ջիվանին հոգեւոր մեծ խորհուրդ է գտնում այն իրողության մեջ, որ քաղցր ձայնը՝ ցարական որոշումը հնչել է մարտ ամսին՝ Մեծի Պահոց շրջանում, վերջինիս հոգեւոր խորհրդին համահունչ ձեւով խաղաղություն բերելով խռովահույզ հոգիներին: Այս հանգամանքը բանաստեղծորեն նա արտահայտում է վարպետ հանգընտրությամբ.

Ես մի քաղցր ձայն լսեցի մարտի մեջը, Մեծ պասին,
Օգտավետ ու դուրեկան նոր նվագը Կավկասին...[28]:

Հրովարտակի դրույթների ընդունելի պայման լինելը բանաստեղծորեն արտահայտվում է այն խոսքերով, թե «Վերանորոգիչ ձայնովը մենք նորոգվեցինք միասին»: Այսինքն՝ ընթացող պայքարն ու քաղաքական գործընթացները հոգեւոր շրջանակին վերաբերող բառընտրությամբ են ներկայացված՝ Մեծի պահոց շրջանի Ս. Հարության խորհրդով նորոգությամբ: Անգամ ցարն ու նրա հրովարտակն ընդունող հպատակները եւ խելամիտ զիջումը չընդունողները համեմատվում են ավետարանական առակի փեսայի ու հինգ իմաստուն եւ հինգ հիմար կույսերի հետ (հմմտ. Մտթ. ԻԵ. 1-13):

Այս առակում ասվում է, որ փեսայի հետ հարսանեկան սենյակը մտնելուն սպասող տասը կույսերից հինգը իրենց լապտերները յուղով են լցնում, իսկ հիմարները՝ ոչ, եւ երբ փեսան գալիս է, իմաստուն կույսերը վառում են իրենց լապտերները եւ փեսայի՝ Քրիստոսի հետ մտնում հարսանիքի: Հիմարների՝ միայն լապտերները վերցնելու, իսկ իմաստուն կույսերի նաեւ ամանը ձեթով լցնելու մասին միջնադարյան մեկնություններում ասվում է, որ լապտերը կուսությունն ու առաքինությունն է խորհրդանշում, իսկ ձեթը, յուղը՝ կատարվող բարի գործերը, ուստի առանց յուղի լապտերը խորհրդանշում է «զկուսութիւն առանց ողորմութեան կամ զհաւատս առանց գործոց»[29]: Իմաստուն կույսերը, սակայն, «զողորմութիւն եւ զմարդասիրութիւն զգեցան», որն «ի ձէթ առակէ եւ զի հեղին զսուսա ի յաղքատս, զոր ման կոչէ»: Այսպիսով, իմաստուն կույսերի իմաստնությունը նրանց բարի գործերն են, աղքատներին արված ողորմածությունը, որը որպես յուղ լցվեց նրանց ամանները եւ վառեց լապտերների լույսը:

Ներսես Շնորհալին (նրան, ի դեպ, իր գործերում քանիցս վկայակոչում է Ջիվանին), Հին եւ Նոր Կտակարանների չափածո մեկնություն «Յիսուս Որդի» քերթվածում միջնադարյան ինքնախարազանմամբ գրում է, որ ինքը նմանվեց հինգ հիմար կույսերին՝ լապտերի համար յուղ չպահելով[30]:

Լապտերի յուղի այլաբանական այդ պատկերը Ջիվանու վերը հիշված գործում որպես փեսայի՝ Իշխողի եւ հինգ իմաստուն կույսերի՝ որպես խոհեմ եւ հրովարտակն ընդունող ժողովրդի, ի հակադրություն այն չընդունողների, այսպես է արտահայտվել.

28 «Ջիվանու քնարը», էջ 98:

29 **Ներսէս Շնորհալի**, Յովհաննէս Երզնկացի, Մեկնութիւն Սուրբ Աւետարանին Մատթեոսի, Կ. Պոլիս, 1825, էջ 525:

30 **Ներսէս Շնորհալի**, Բանք Չափաւ, Վենետիկ, 1928, էջ 125:

Երբ փեսան գա տեսնի համերաշխության ջահը,
Հինգ հիմար կույսերի նման չը սիրենք նինջը, մահը,
Ձեռք-ձեռքի տանք, խոհեմ լինենք, հարգենք մեր երկրի շահը,
Մենք ինքներս առիթ չտանք նոր գալիք ջոկ վնասին[31]:

Նույն բանաստեղծական այլաբանությամբ նաև այն միտքն է հայտնվում, որ այդ հրովարտակով եկել է փոխադարձ զիջումների պահը, եւ որ նոր ընդվզումն արդեն միայն նոր վնասներ կպատճառի: Ահա այսպես խրատական այլաբանական ձեւի մեջ Ջիվանին արտահայտում է նաև իր քաղաքական դիրքորոշումը:

Բարի գործի, որպես լապտերի լույս տվող յուղի պատկերին, Ջիվանին անդրադարձել է նաև «Անմխիթար մարդ» բանաստեղծության առաջին տան մեջ.

Ծաղկազարդը եկեվ, Ջատիկն էլ կուգա,
Քեզ համար Մեծ պաս է, անմխիթար մարդ,
Քու գործի ղամպարի մեջը լույս չկա,
Քարյուղը պակաս է, անմխիթար մարդ[32]:

Այս բանաստեղծության ներքո գրված է 1905 թ. ապրիլի 10-12, որը Հայոց Եկեղեցու շարժական տոմարով այդ տարի հաջորդել է Ծաղկազարդին, ընկնելով Ս. Հարությանը նախորդող Ավագ շաբաթին: Եւ ահա տեւական պահքին հաջորդող վերջին շրջանում՝ Ավագ շաբաթին Ջիվանին մի զուգահեռ է անցկացնում Պահքի տրտմության օրերի եւ Ս. Հարության ցնծության միջեւ, ասելով, թե բարի գործեր չկատարած մարդու համար կյանքը նման է պահքի տրտում օրերի շարանին, որովհետեւ նրա լամպում չկա բարի գործերի վառվող յուղը: Այնինչ բարի գործեր կատարածների համար մոտենում է Ս. Ջատիկը:

Ջիվանին հետեւողական է եղել մարդ-մահկանացուի կյանքի ու գործի գնահատության չափանիշների հարցում: Դրանք՝ խարսխվելով քրիստոնեական բարոյականության վրա, բնորոշ են նաեւ բոլոր ժամանակների համամարդկային պատկերացումներին ու չափանիշներին:

Ջիվանու որդին՝ աշուղագետ Գարեգին Լեւոնյանը, Հոմերոսի ստեղծագործության վերաբերյալ իր դիտարկումն ամփոփում է հետեւյալ եզրահանգումով. «Նրա (Հոմերոսի, - Թ. Պ.) բովանդակ երգեցողությունը ուրիշ բան չէ, ինչպես ասում է մի հմուտ գրագետ, եթե ոչ առաքինության գովեստ եւ մոլության պարսավ»[33]: Ահա այս հակիրճ բնորոշումը դարձավ նշանաբան բոլոր ազգերի աշուղների համար՝ առաքինության գովեստ եւ մոլության պարսավ: Այս ելակետից պիտի արժեւորել ու գնահատել Ջիվանու երգարվեստի բովանդակությունը:

31 «Ջիվանու քնարը», էջ 98:
32 Աշուղ Ջիվանի, Անհայտ երգեր, էջ 339:
33 **Գ. Լեւոնյան**, Երկեր, էջ 54: